

կան եւ. ուսումնական, խե. Տարի. Վեներիկ, 1887, Տգ. Ս. Ղազարու:

20. ԱՆՀԱԹՐԵՆՍԺ ԱՌԱՋԻՆ — Առաջին Ըն. Թերջարան, Բ. Տպագր. Թեֆլիս, 1887: Գին 20 կոպ.

21. ԲՈՒՅԱՆԴԱՅԻ ՆՈՐԱՅԻ — Բնասար, Կոստ. Պոլիս, 1887:

22. ԲՈՒՐԱՆՆ, երկարաթմբերթ, Ե. Չ. Տարի: Կոստ. Պոլիս, 1887: Տգ. Գ. Պարտապետի:

23. ԲՈՒՐԱՆՆԱՆ ՄՐԱՆԻՆՍԺ, երկարաթմբերթ պատկերապար. Չ. Տպագր. Կոստ. Պոլիս, 1887: Տգ. Ն. Պերկպետի:

24. ԳԱՄԱՍԻՆՍԺ Ա. — Տեղեկագիր միամսյա գործունեութեան Բազուկայ Հայոց Մարտախրական Ընկերութեան, յանուս Ս. Գրեգորի Լուսարի, վասն 1886 ամի, Բազուկ, 1887: Տգ. Ս. Բ. Տեր-Յովհան. Նեանանցի:

25. ԳԱՄԱՍԻՆՍԺ Տ. Ս. Մ. — Դպրոց Անգղիե. բն. լեզուի, Ըրթան Վ. Հայերեն եւ. Անգղիերեն Ըն. Թերջարան, Կոստ. Պոլիս, 1887: Գին 3 զըշ.

26. Գ. ԳԱՄԱՍԻՆՍԺ ՌԺ. ՏԵՐ-ԳՐԻԳՐԻՆՍԺ — Մանկամանութիւն, Թեֆլիս, 1887: Գին 50 կոպ. [Ըննչոյ. Աշխատ., 1887, Թ. 36:]

27. ԳԱՐԹԱՆԻՆՍԺ Պ. — Թուաբանութիւն, Կոստ. Պոլիս, 1887:

[Ըննչոյ. Աշխատ., 1887, Թ. 1033:]

28. ԳԱՐԹԱՆԻՆ Չ. ԳԱՐԹԱՆ — Աղթաք ջերմա-աւանդի հոգւոյ առ. ամենատարբ. սիրտ Յիսուսի, Վե. նետի, 1887: Տգ. Ս. Ղազարու:

29. ԳԻՏԱՆՆԱՆ ՇԱՐԺՈՒՄ, Գ. Տարի, Կոստ. Պոլիս, 1887:

30. ԳՈՎՐԻՆԻՆՍԺ Չ. ԳՐԻԳՐԻ Վ. — Բանալի Ար-քայութեան, Աղթաքի բն. Տպագր. Վեներիկ, 1887, Տգ. Միխիթարեանց, Գին 3 Քր.

31. ԳՈՎՐԻՆԻՆՍԺ Չ. ԳՐ. Վ. — Այգեկութիւնք ամենատարբ. Հաղորդութեան եւ. Արքայ Կուսին, Վե. նետ, 1887, Տգ. Միխիթարեանց, Գին 1 Քր.:

32. ԳՐԻԳՐԻՆՍԺ ԳՐԻԳՐԻ ՔՆՆՅ. — Սիսակ (երգարան), Ս. Պետերբուրգ, 1887: Տգ. Սիբորոսովի, Գին 1 ռբ. 20 կոպ. [Ըննչոյ. Մեթ, 1887, Թ. 120: Նոր Դպր, 1887, Թ. 181:]

33. ԴԱՄԱՍԻՐԻՔ ՆՈՐ ԱՄՅԱՆԻՆՍԺ ՆՐԱԾԵՏՈՒ-ԹԵՆ: Կոստ. Պոլիս, 1887: Գին 10 զըշ.:

34. ԵՃՆԱՆ ԵՆԱՐԱՊԵՆ — Պատմութիւն Ղեւ. ոնդեայ Մեծի Վարդապետի Հայոց: Բ. Տպագրութիւն, Ս. Պետերբուրգ, 1887: Տգ. Սիբորոսովի:

[Ըննչոյ. Արքայ, 1887, Թ. Ը. Մեթ, 1887, Թ. 139:]

35. ԵՂԻՆԱՋԱՐԻՆՍԺ ՍՈՐՈՄՈՒՄ — Անգլոփոսի պարունական գիւղացիների անասնաբան գրութիւնը ուսումնասիրելու նիւթերի ժողովածու. Ա. Հասար, Թեֆլիս, 1887:

[Ըննչոյ. Մեթ, 1887, Թ. 79:]

36. ԵՐԵՅԻՆԻՆՍԺ Գ. — Ա. Ս. Բեյ յինի, փոքրիկ 1 արարածով. Գին 20 կոպ. Բ. (Բարեւ. Բարեւ. Ս) Մի Տամաս պատասխան: Թեֆլիս, 1887: [Ըննչոյ. Արքայ, 1887, Թ. Գ.]

37. ԵՐԿՐԱՆԻՆՍԺ — Հանգեալ գրական եւ. գի. տական, Ե. Տարի, Կոստ. Պոլիս, 1887:

38. ԵՐԱՆԻՆՍԺ ԴՈՒՏՈՒՄ ՔԶԳ — Համախառ-կան տեղագրութիւն Հաղատայ: Հանաւ Արքայ, ամապրէ, Ելիթանի, 1887: Գին 50 կոպ.:

39. ԶՈՐԱՆՍԺ ԳՐԻԳՐԻՆ — Անհասարած սերունդ մը, Կոստ. Պոլիս, 1887: Հանաւ Մաթ. լուսարի: [Ըննչոյ. Աշխատ., 1887, Թ. 1033:]

40. ԶՄԱՆԱՆ ՕՐ. ՆՈՒԱՐԻ Յ. — Տարաբաղիկ Մուսա (Թրգմ.) Կոստ. Պոլիս, 1887: Գին 3 զըշ.:

(Ըրթանանի)

ԱՐԱՆՍՏԵԻՏԵԼԵՆ

ՎԵՆԵՐԻՆԵՆ ԱՐԱՆՍՏԵԼԵՆՆԻՆ

ՊԵՏԻՆԵՐԱՋԱՐԻ

Տարւոյ ընդհանուր ուշադրութեան եւ. հետաքրքրութեան գլխաւոր մէկ նիւթն եղած է այժմու Վատիկանեան արուեստահանգէլը՝ Թե արուեստգիտական եւ. Թե քաղաքական տեսա-կիտիւ. — այն մեծագործ անմահ գանձարանն որ մարդկային ճարտարութեան հրաշալւաց եւ. միանգամայն հարստութեան անբաւ կուտակու-թիւն մը կ'ընծայեցընէ. Թող ըստ այլեւայլ հայ-եցմանց ունեցած մեծ նշանակութիւնը:

Կարծէր ստուգել որ յատուկ պատկերա-լագր պարբերական թերթ մ'աւտը նուիրուած՝ յագեցընէր աշխարհի օրինաւոր հետաքրքրու-թիւնն յայսմ մասին. ինչպէս իբրց կ'ըլլէ կ'Հոռմ նոյնպիսի ձոխ նկարագրական հրատարակութիւն մը, որ եւ. այլեւայլ երկիրներու մէջ կ'օրինակուի Թարգմանութեամբ ու. ձեռքէ ձեռք կը յածի ամէն կողմ: Նոյն վա. երական տաղէ աղբիւրէն քաղելով կը հաղորդէ Հռոքէս ալ իւր յար-գոյ ընթերցողաց՝ միայն գլխաւոր եւ. նշանակու-թիւն ունեցող նուէրներն. որով կը յուսայ ոչ-ինչ նուազ հաճոյական ծառայութիւն մ'ըրած ըլլալ մերազգի հատարակութեան:

Երանի Թե ամէն ժամանակ միայն այս կար-գի հիւանալը գեղեցկութեանց խաղաղական տե-տարանը ըլլային՝ հասարակաց մտադրութեան գրաւէջք:

ՄԵՄՓԱՐ ՍՄԱՆՆԵՆ ՍՈՒԼԿԱՆԻՆ ՆՈՒՐԵ

Մամանակին ծանուցած է Հռոքէս՝ Աս-տուածապատիւ Գերերջանիկ Տեսուն Ստեփ. Պետրոսի Ժ. Կաթողիկոսի՝ Վեհափառ Սուլթա-նին կողմէն արտաքոյ կարգի պատգամաւորու-թեամբ կ'Հոռմ առ լեռն Ժ.Գ. առաքելիւն ու. նոյն հոգը ընծայեալին ծանրագին Մատանույ նուէրը Նորին Սրբութեան մեծահանգէս արա-րողութեամբ մատուցանելը:

Աստիկ նոյն Մատանույն նկարագիրը Հոռ-մէն գրուած, որ նախերգանք է կ'ընէ՝ նոյն նուէրն անուանելով՝ «Ընծայ մ'որ միայն Վեհա-պատ Վերլիճ Վեհապետի կարող է ընծայել»:


Կայսերական Մատանույն բոլոր խորու-թիւնը կը ընա խոշոր մեայիտ (solitaire, Բեթլէն)

Յ. Երանան Թ. Թ. 3. Մարտ, 1887:

ադամանդ մ'ամենալճիտ ջրով ոսկեգլխի ցոլացմամբ, լլցնանիստ, ձուածեւ հատուածակերպ. (prismatique.) Գրտանւոյն ոսկեղէն ակնակապիճը նոյն ինքն ղեհափառ Սուլդանին հնարած տուած ձեւովն է. այն է՝ արքունական թագի ձեւ: Տասնուփեց հատ շատ նուրբ ու սրածայր ոսկի ծիւղ՝ գլխին գնդակերպ կոճակներով՝ բռնած են յաղթ ադամանդին նրբակուր եղերքը. այն ազնիւ քարին՝ որ թագաւորող ցեղին մէջ պատմական (historique) գոհար մըն էր, եւ ղեհափառ Սուլդանին շատ յարգի. ինչպէս ինքն իսկ բռած է Տանն Նիլիկիոյ Պատրիարքին՝ երբ զայն իրեն

կը յանձնէր որ ի նշան իւր յարգական խնդակցութեան նուիրէ գերապարգ. քահանայապետին խաղաղութեան:

Առաջիկայ պատկերս կը ներկայացընէ Ղեհափառ Սուլդանին մեծագին Գրտանին երեք պլեւայլ գրիւք, որպէս զի կատարեալ կերպով կարենայ ցուցուիլ թէ գոհարին եւ թէ ակնակապճին պերճութիւնն ու միանգամայն ճարտարութեամբ պարզութիւնը: Այս տեսակ բաց կապիճներն, որով գոհարին վերին եւ ստորին երեսներն ազատ մնալով լոյսը քովանց կը զարնէ՝ ակնագործք գաղղ. բառով à jour կ'անուանեն:



ՍՊԱՆԻՈՅ ԹԱԳՈՒՅԻՈՅՆ ՆՈՒԻՐԸ

Մատանի մ'ալ նուիրած է Նորին Սրբութեան՝ Սպանիոյ բարեպաշտոն Թագուհին, — Հովուակ անմատանի, բոլորովին տարբեր շէնքով ու զատ տեսակ:

Հատ ճարտար գործուած է մէրտեղի լլցնանիստ գոհարը, հիանալի շափիւղայ մ'որ ստուգիւ արժանի է քերթողին բացատրութեան՝

Քաղցրեանգ շափիւղայն արեւելեան:
(Dolce color d'oriental zaffiro.)

Նոյն գլխաւոր գոհարին շուրջը բոլորած է տասուերկու սպիտակափայլ արամանդեայ մեծ շողականց (brillant) պսակ, որոնք պնդիսի ճարտարութեամբ թեթեւակի ագուցուած են արծաթեայ եղերքին վրայ՝ որ արծաթն անտեսանելի կը մնայ. — ոսկեգործութեան արուեստին օրինակ ըլլալու գործուածք:

Դարձեալ Գրտանւոյն երկու կողերէն շարք շարք գեղեցիկ շողակուլք կ'իջնան՝ դեպ ի վար եռանկուն մը կազմելով, այնպէս որ օղակին միայն վարի մէկ քառորդն ազատ կը մնայ: Այս ադամանդեայ կողմնական շարքերուն բոլորմունքը



կատարեալ աստեղանման ցով-
մունք կ'արձակեն Մատանւոյն
ամէն գիւն :

Ստույգ տեղէ իմացած ենք՝
[Ժէ արամանդներուն որանչեի
շարուածքը նոյն ինքն նուիրա-
տու թագուհւոյն գիւտն է ե-
ղած, որ արդէն ուրիշ հանձա-
րեղ ձրիւքը նշանաւոր է:

**ԳԵՐՄԱՆԻՈՅ ՎԵՀԱՓԱՌ
ԿԱՅՍԵՐ ՆՈՒԵՐԸ**

Այս շեղք ու փառայեղ հայրասեռական թաղը սրան-կին կամարի ոճով է (style o-ghivani), եւ 1500էն ետեւ սո-վորական եղած հռոմէական ձեւով: Բոլոր թագն ամենազ-նիւ արծաթաթել զարդարու-ն ասղագործութիւն է: Իսկ յե-տեւսու կիսեռած երկրնեան երկուքն այ մշտնդը բաշա-նայապետին զինանշանը ման-րանկար յօրինած է արծա-պակեղ վրայ (émail, ֆէւ,) ու-կի շընթանով՝ որուն վրայ խորհրդարո նշանինը փորա-գրուած են: Թագն ու երկը-նեը թէ ըստ տեսակին եւ թէ ըստ քանակութեան եօժա-նառուեալերկու շատ ծանրա-գին գոհարներով զարդա-րուած են: Երկընեան վրայ երկու կարկեհան (rubis, բը-ւէշ եփա-լ,) երկու զմրուտ (émeraude, շէփա-լ,) եւ եր-կու շափրիզայ (saphir, կփո-լա-լ) կը շողան ամենալճիւ- ջըով, ուկեղ մէջ առած, եւ խիտ առ խիտ մանրիկ ագա-մանդներու (կամ շողականց, brillants,) պարկով պատած:

Թագը զարդարող եօթա-
նասուններովու ականց նշա-
նաւորներն են՝

Տասուերկու՝ խոշոր Շող-
ակն, (brilliant,) բուն աղնիւ
տեսակ մենայեւք, (խոս Բէտ-
լււ,) նմանապէս ամենալճիտ
ջրով :

Եօթն կարկեհան, որոնց երկուքին սաստիկ շողիւնը մեծապէս աչքի կը զարնէ:

Չորս Զմրուխտ եւ երեք Արեւելեան շա-
փիւղայ՝ իրարմէ գեղեցիկ եւ սիրուն գոյներով:
Երկու մութ մանուշակ Գեղեցիկ, (am-
thyste, ֆեդելիթէթ), եւ մէկ շատ հազուագիւտ
խարսէշ Թակինթ (hyacinth, արք. Եփեմ-ն):

Այս թագն որուն վրայ արուեստն ու բնու-
թիւնն ըստ բաղձանաց մեծագորք գերմանական կայ-
սեր՝ պէսպէս գեղեցկութեանց բովանդակ լինու-
թիւնը գեղած են ամենայն առատութեամբ, գանձ
մըն է՝ որ Վատիկանեան Արուեստահանգիսին
այցելուաց աչքը բունաբար իրեն պիտի ձգէ:

Սըն ծանրագին նուէրն Ս. Քահանայապե-
տին յանուն կայսեր մատուցողն եղաւ ծանօթ
գետասանագէտն Հլէօցեր:

Ընթերցողն ինքնին կնոյս իորհրդածել՝ թէ
յիշեալ պատուական ականց 72, 12, 7, 4, 3,
2, 1 խորհրդաւոր թուերն անշուշտ Սուրբ Գրոց
այլեւայլ նշանաւոր անձնաւորութեանց ականա-
րութիւնք են՝ կաթողիկէ եկեղեցւոյ վերաբե-
րութեամբ: — զորօրինակ ֆրիստոսի Ալակեր-
տաց, Առաքելոց, Նախկին Սարկաւագաց, Աւե-
տարանաց, եւ այլն:

ԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ

ՄՈՍԿՈՎՈՐԹՈՐԹԻՆ

ՍԻՐԻՍ ՏԵՍԻՍԱՐԻՍԹՈՐԹԻՆԵՆԸ ՄԵՆ

ԳԼՈՒԽ Ե.

Սրմը իսկեղծման և մտքման:

(Հարաւստիւն):

Վրիս եւ յառաջ մամբ մանր մանր կը յօշոյ-
ի եւ կաթնային մէջ կը նետուի, եւ ամէն մէկ 50 քի-
մոմին 4—5 լիտր ջուր կը լցնուի: Անկէ ետեւ
կաթնային տակ չափաւոր կրակ կը վառուի եւ թոյ
կը տրուի որ մամբ կամաց կամաց հալի: Նոյն միջոցին
մոմն զգուշութեամբ եւ անընդհատ կը յուզուի
մինչեւ որ կատարեալ ծորելի ըլլայ: Կատարեալ
հալելու որոշ ջերմութեան աստիճան մը չի կրնար
արուել. վառ զի ախկայ մոմի քանակութեան կա-
խելաւ է: Քանի մը փորձառութիւնք կրնան ամե-
նապաւ ուսուցիչ ըլլալ: Մոմը յուզելու ժամանակ
մոմին ձեռքին ըրած ընդգիծադրութեան զգալն
նուազմանէ կնոյս իմացուիլ՝ թէ ծորելի ըլլալու
աստիճանին հասած է: Մոմը կատարեալ հալելէն
ետեւ՝ գործարարներէն մէկուն նշան կը տրուի կաթ-

նային ծորակը բռնալու, եւ հալած մամբ ջրով հան-
գերձ կաթնային մօտ գետեղաւած տաշտի մը մէջ կը
սկսի հոսել: Ցաշտը լցնուելէն ետեւ կափարջաւ կը
ծածկուի եւ բրդեղէնով կը պատաստուի, որպէս զի
մամբ շուտով չառաի եւ ժամանակ ունենայ իրմէ զա-
տելու ունեցած աղտերն, որոնք տեսալարաւ ծան-
րութեան առաւելութեամբ՝ յատակը կը նստին:
Նոյնպէս ջուրն ալ յատակը կը նստի աղտին հետ ի
միասին: Այս տաշտն այսպէս թոյ կը տրուի 2—3
ժամ անալար, ըստ աստիճանի քանակութեան
մոմի: Անկէ ետեւ կափարջն ու բրդեղէնը մէկգի
կ'առնուին, տաշտին յատակի կողման խցանը կը բա-
ցուի, ջուրն ու աղտն դուրս կը հոսէ, եւ տաշտին
մէջ մնացած մամբ կ'առնուի, զարձեալ մանր կը յօ-
շուի, եւ վերջիշեալ գործողութիւնն ամբողջ կը
կրկնուի, մինչեւ որ ամենեւին աղաւ չմնայ: Այն
ատեն մամբ մտրուած է:

Ինչ ինչ դործատանց մէջ տարբեր կերպով
կը մաքրեն մամբ, բայց յիշեալ կերպը պարզն ու
լաւագոյնն է:

Իսկ մամբ պաղեցընելու ժամանակ ջրոյ հետ
յատակը նստած աղտի մուրն հետեւեալ կերպով
կը գործածուի: Աշտը ջրով հանգերձ փոքրիկ ծա-
կերով թիթեղէ պաղեցուտ մէջ կը լցնուի, որպէս
զի ջուրը հոսի երկմայ: Մնացեալ մուրն կոշտ կտաւի
վրայ կը տարածուի եւ թոյ կը տրուի որ ջորնայ,
եւ այսպէս բաւական քանակութիւն մը ժողովելէն
ետեւ կաթնային մէջ կը դրուի, եւ 50 քի. մուրն
վրայ 12 լիտր ջուր կը խառնուի: Անկէ ետեւ կրակը
կը վառուի եւ ջերմութիւնը կը սաստկացուի՝ մին-
չեւ որ մամբ լաւ հալի: Ջերմութեան այս աստիճա-
նին մէջ կը մնայ ջրախառն մուրը 3—4 ժամ, մին-
չեւ որ պարզ ժամանակ ունենայ ջրոյ յատակը նստե-
լու: Այնուհետեւ կրակը կը մարուի, մեծ տափակ
դգալով մը ջրոյն երեսը լողացող մամբ կ'առնուի, եւ
մեծ՝ պղնձի՝ ներքուստ անագեալ տաշտի մէջ կը
դրուի: Այս կերպով մամբ զանգուածներ յառաջ
կու գան, որոնք հասարակ մոմի զանգուածներու
պէս կը գործածուին կամ՝ կը վաճառուին:

Որովհետեւ այս Գլխոյ մէջ մամբ հալեցընելու
եւ մաքրելու վրայ խոնցանք, պատշաճ է հետեւե-
ալն ալ յաւելուլ: Ծանօթ է որ մոմագործք մոմի
րեկորներն, այսինքն վառած մոմի մեծ ու փոքր
մնացորդներ կը գնին, եւ զարձեալ կը հալեցընեն
հետեւեալ կերպով:

Նախ մնացորդներն մոմին տեսակին համե-
մատ կը ջուրին, զուտն, աղիւն, սպիտակն, գե-
ղինը, խաղախեան, եւ այլն զատ զատ: Սխու-
հետեւ ամէն մէկ տեսակը զատ զատ կը յօշուի,
պատրոյգը կը հանուի մէկ կողմը կը դրուի: Այս
մամբ կը հալեցուի, ժապախեանքն կը թափուի,
կը սպիտակցուի ուրիշ մոմերու պէս, եւ իրեն աղ-
նի մոմ՝ մոմերու եւ այլ մոմերէնց վրայ կ'անցուի
իբր ծածկոց: Շարքախառն տեսակն աւելն ասորին
վախճաններու կը գործածուի, եւ աճան կը վա-
ճառուի:

Իսկ պատրոյգի կտորներն՝ զոր մէկ կողմը գնել
տուինք, զատ մոմ՝ կը բովանդակեն, որ պէտք չէ
կտորնցնել: Անոր համար կաթնասնեղն մէկուն մէջ
մինչեւ կէս՝ ջուր կը լցնուի, եւ ամէն տեսակ պատ-

¹ Յիշեալ քանակութեան նուազ չի կրնար ըլլալ
ջուրը: աս կ'է ոչ մոմին հետ պնդու կը մնայ, որ յա-
ջորդ գործողութեանց ժամանակ անկարելի կ'ըլլայ զատել,
որով ջուրն մոմի մասանց մէջ կը կցի զի մնայ, եւ մամբ
վառելու ժամանակ միշտ կը շառափէ: